ղովի յայտարարութիւնը „Մանզումէի“ մէջ իմ արած մի քանի դիտողութեանց վրա։ Խնդրեմ այժմ չը զլանաք տեղ տալ ձեր լրագրի մէջ իմ պատասխանին։

Միացեալ ընկերութեանց Նախկին Ցնօրէն ժողովը խոստանում էր հասարակութեան իր արած յայտարարութեան մէջ „փութացնել“ իր տալիք հաշիւները, յիշեցնելով մի և նոյն ժամանակ „կարևորութիւն“ չը տալ իմ արած դիտողութիւններին 40,000 ռուբլու մասին։ Եթէ անցեալ Ցնօրէն ժողովը ուզում էր, որ հասարակութիւնը „կարևորութիւն չը տար“ իմ արած դիտողութիւններին, այն ժամանակ հարկաւոր չէր, որ ինքը այդ Ցնօրէն ժողովը օրինակ ցոյց տար, այնչափ մեծ կարևորութիւն տալով „Մանզումէի“ մէջ իմ արած դիտողութիւններս, որով միանգամից բոլոր լրագիրներին դիմեց իր յայտարարութիւնը հրատարակելու համար։ Միթէ՞ այսչափ հիշա է եղել մի որ և իցէ յայտարարութեամբ հասարակութիւնը միամտացնելը...։ Միւս կողմից էլ բաւական հեռաքքրքրաշարժ է անցեալ Ցնօրէն ժողովի վարմունքը ինձ հետ։ քանի որ դեռ իրանց անձերը և գործերը չը ճանաչելով պրոպագանդ էին անում Ռուսիայում ի Նպաստ իրանց գործունէութեան, այն ժամանակ դէպի ինձ ուղղած իրանց պաշտօնական նամակներով այնչափ կարևորութիւն էին տալիս ինձ, որ ես կարմրում էի իմ առաջ շռայլած փութամ շողոմոլութիւններից։ իսկ երբ Կ. Պոլիս գալով, սկսեցի քննադատական լեզուով խօսել իրանց հետ, այդ բոպէից սկսեցին ասել՝ „էլ կարևորութիւն չը տալ“ իմ խօսքերիս։ Միթէ կարելի է այսչափ պարզամիտ համարել Հայ հասարակութիւնը.... Բայց հարցը իմ անձնաւորութեան վրա չէ, այլ ազգին տալիք 40,000 ռուբլի հաշիվն որդ ցանկալի է, որ Միացեալ ընկերութեանց Նախկին Ցնօրէն ժողովը իր հաշիւները „փութացնելով“ ուշադրութիւն դարձնէ մանաւանդ հետևեալ կէտերի վրա։

Միացեալ ընկերութիւնը լինելով բարեգործական հասատատութիւն, որի մէջ մասնակցողները իբր թէ „ձրիաբար և անձնուիրութեամբ“ պիտի ծառայեն, անցեալ Ցնօրէն ժողովի ժամանակ այսպէս է վարվել։ Պ. Վասիլեանի „գեղագրութիւն“ անուն „աշխատութիւնը“ տպագրելու համար 200 ռուբլի ծախք, մինչդեռ ինձ յայտնի է, որ հանդուցեալ մայոր Միանարովի առաջին Հայ գեղագրութեան տպագրելու գնացել է 6—7 ռուբլի ծախք, իսկ Կ. Պոլիս այժմ տպագրելու համար ի հարկէ հարկաւոր է աւելի քիչ։

Պ. Վասիլեանի Հայաստան ճանապարհորդելու համար 100 ռուբլի ծախք, մինչդեռ ինքս՝ անձամբ գիտեմ, որ Հայաստանի ճանապարհորդութիւնը, եթէ զբոսանը ռուբլով լիքն էլ լինի, դարձեալ զբուշներից աւելի ծախք չի պահանջի իր կարաւանային հաղորդակցութեամբ և ամեն տեղի հիւրընկալութեամբ։

Պ. Վասիլեանի „անձնուէր“ ճանապարհորդութեան համար տուած է Նորան ևս մի ռուբլի ժամացոյց, որ կարժէ 20 ռուբլի (ասում են թէ Նորա համար, որ Քիւրդերը գողացել են ճանապարհում Պարոնի երկու տարվայ հագուստների ծրարը), որը չը գիտեմ թէ ի՞նչ էր շինում Հայաստանի լեռների վրա...։

Նոյն Պ. Վասիլեանի „անձնուէր Հայրենասիրութեան“ համար 38 ռուբլի տարեկան տան վարձ է տուած, Օրթաքէոյի մէջ Նորա տանը մի երկու անգամ ժողովելու համար „ընկերութեան յառաջադիմութեան“ վրա խօսելու դիտաւորութեամբ։ ուրեմն միայն Պ. Պ. Վասիլեանների „հայրենասիրութիւնը“ վարձատրելու համար մի տարվայ մէջ անցեալ Ցնօրէն ժողովը 358 ռուբլի ծախք է արել։ լաւ ազգասիրութիւն է...։

Միացեալ ընկերութիւնը լինելով ո՛չ անգլիական Ուէստ-Մինիստրութիւն, ո՛չ Թիւրքիայի մեծ Վիզիրեաթ և ո՛չ էլ ազգային Պատրիարքարան, այլ մի խեղճ և համեստ (՞) հիմնարկութիւն մի քանի գիւղական դպրոցներում այրուրէն սովորացնելու համար, անցեալ Ցնօրէն ժողովի ժամանակ (Լուիի և հիմայ էլ) ունեցել է հետևեալ ծախքերը ո՛չ—ուսումնարանական նպատակի համար։

Ա. Կենդրոնական վարչութեան մէջ—623 ռուբ. (ըստ Բիւջէի, կը տեսնենք և իսկական ծախքն էր)

Բ. Այլ և այլ ծախք—464 ռուբ. ուրեմն ընդամենը կենդրոնի մէջ միայն մօտ հազար ռուբ. կամ տասը հազար բուրլ ծախք։ լա՛ւ „բարեգործական“ և „համեստ“ հասատատութիւն է...։

Զանազան լրագրաց համար տարեկան 30 ռուբ., իսկ միայն Թէրջիմէնի-Էֆքեարի մի քանի բաժանորդագրութեան տարեկան գինը 12 ռուբ. հետաքրքիր եմ իմանալ թէ ի՞նչ «ազգօգուտ» նպատակի համար է այսպիսի միսիոնարութիւն, երբ յիշեալ օտար լրագիրը Հայոց ազգի և եկեղեցու երդուեալ թշնամին է ճանաչված համայն ազգի մէջ։

Նոյն Ցնօրէն ժողովը չը գիտեմ ո՛ր մեծ մարմնամարզական Փէհլիվէնին (ըմբիշ) վճարած է (՞.՝.՝) կանխիկ 70 ռուբ., իսկ Մշեալ Փէհլիվէնը միւս օրը ևեթ անցյատացած է։

Նոյն Ցնօրէն ժողովը չը բաւականանալով «այլ և այլ» ծախքերի համար մնացած 464 ռուբլով, իր Բիւջէի մէջ (իսկականում երևի աւելի ևս) ցոյց է տալիս դարձեալ 50 ռուբլի „այլ և այլ“ ծախքերի համար։ (ինչ որամիտ բան, միանգամով ասել՝ «այլ և այլ» ծախք ամեն հաշիւներից կարճ պրծնելու համար։)

Այս բոլոր սոսկալի ծախքերը անելուց յետո, նախկին Ցնօրէն ժողովը 180 ռուբլի էլ նշանակում է Կիլիկիայի գիւղական վարժարանի ուսուցչին, իսկ 100 ռուբլի միայն Թուարանութեան մի ուսուցչին, մինչդեռ այսպիսի ռոճիկներ Ռուսահայերի մէջ չեն տասնում նաև համալսարաններում աւարտածներին։

Ահա դեռ մի քանիսը այն կէտերից, որոնց վրա ցանկալի է, որ անցեալ Ցնօրէն ժողովը ուշադրութիւն դարձնէ «փութացնելով» իր հաշիւները, էլ առանց զուր յայտարարութիւնների վրա ժամանակ և փող վատնելու՝ մասնաւոր անձանց „կարևորութիւն“ տալու կամ չը տալու համար։

Գրիգոր Նիկողոսեան

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՑԻՑ

Կ. Պոլիս, 4 օգոստոսի

Անցեալ չորեքշաբթի, յունիսի 27-ին Պերայի հայ-կաթոլիկների Ոսկերեան եկեղեցու մէջ հակահասուսնեանների արտաքոյ կարգի Նիստ ունէին իրանց տասն ու չորս տարվայ եռանդալից պարագլուխ հայր Էնֆիալջեանի նախագահութեամբ։ Նիստ սկսած բոպէին հրաւիրագիր ստացայ յիշեալ իմ բարեկամից ներկայ գտնվիլ իրանց վիճաբանութեանց և խորհրդակցութիւններին. անմիջապէս գնացի այնտեղ, որ իմ բնակարանից 10 բոպէ հեռաւորութիւն էր։ Նիստի մէջ ներկայ էին 44 հոգի հակահասուսնեանների պարագլուխներից, որոնց մէջ գտնվում էին չորս-հինգ անձինք, որոնք յայտնի են այս տեղ, ինչպէս լաւ պետական մարդիկ և փորձված փաստաբաններ։ Հայր Էնֆիալջեանը ներկայացրեց ինձ բոլոր ժողովին և մասնաւորապէս յիշեալ չորս-հինգ անձինքներին, որոնք էին պ. պ. Միհրան-բէյ Դիւզեան, Բէքմեզեան, Կ. Սագզզ, Բէօչէ-Օղլու և այլն։ «Կ. Պոլսի հայ մամուլը մեզ ուրացաւ այն օրից, երբ գերապայծառ Ազարեանին Բ. Դուռը բերաթ յանձնեց, գոնէ դուք վայ եղէք մեր ռուսահայ եղբարց քով, որ Ազարեանին բերաթ տալը կամ չը տալը ձեռ մեկնէ իր տաճկահայ կաթոլիկ եղբայրներին, բարոյապէս քաջալերէ և մխիթարէ նոցա իրանց այսպիսի քաջ և արժանի դիմադրութեան և հաստատամտութեան համար։ Իսկ ինչ կը վերաբերի Կ. Պոլսի հայ մամուլին, նա բոլորովին չէ կարող լինել ճշդրիտ արտայայտիչ ժողովրդի չաղերի և չարժումների, որովհետև Նորա բոլոր արտայայտութիւնը և բռնած ընթացքը ղեկավարվում է լիրաների ներշնչմամբ, այլ ոչ ազգային և անձնական պատուասանաչութեամբ...։

Ներփակեալ կը գտնէք պապի արած գովաբանութիւնները «իր յարգելի եղբայր» Անտոան Հասունի և Ազարեանի մասին. սորանից կարող էք իմանալ թէ ինչով է տարբերվում Ազարեանը Հասունից, մինչդեռ այստեղի հայ մամուլը էլ խօսք չը մնաց, որ չը շռայլէր «գերերջանիկ» Նորընտիր կաթողիկոսի «ազգասիրական» գործերի վրա. այսպէս է այստեղի մամուլը ամեն բանի մէջ ևս, թէ վերաբերվի հարցը պապի Նորընտիր արքեպիսկոպի, թէ ազգային ժողովին, թէ էֆէնդիների արաքներին և թէ զարգացեալ ընկերութիւնների գործունէութեանց....

Գրիգոր Նիկողոսեան

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Վիէննայից գրում են անգլիական «Standard» լրագրին թէ Անգլիան և Ռուսաստանը Հայաստանի բարենորոգումների խնդրի վրա մտադիր են մի քանի առաջարկութիւններ անել Բ. Դրանը, բայց միւս տէրութիւնները օսմանեան պետութեան ոչնչան զոհողութիւնները ի նկատի առնելով, տատանում են, գոնէ դեռ առ այժմ, Բ. Դրան վրա Նորից ճնշում բանացնելու։

—Ամերիկական լրագիրները հաղորդում են որ գօկոր Ցանէր, որ յայտնվեցաւ Նրանով որ 40 օր աջողութեամբ պաս էր պահել, այժմ Եւրոպա գալով ուզեց Նորից կրկնել իր փորձը, գրաղ գալով մի եւրոպացի գիտնականի հետ։ Բայց Նորերումս ընկնելով հիւրանոցի սանդուխներից վնասվեց և մնաց։

—Տունիսից ֆրանսական լրագիրներին հաղորդում են, որ հարաւում հանգստութիւն է տիրում, այն ինչ հիւսիսարեւելքում զօրեղ անկարգութիւն է չարունակվում։ Սֆաքսից, օգոստոսի 11-ին հաղորդում են, որ ազգաբնակութեան գինաթափ անելը չարունակվում է։ Ջնուորական իշխանութեան ձեռքով արդէն 4,000 հրացաններ են խլված։ Ֆրանսական զօրքերի առողջապահական դրութիւնը շատ լաւ է, որին օգնում է և Սֆակսի կլիմատ, որը յայտնի է իր առողջապահական յատկութիւններով։ Գալապտա կոնրադ ճանապարհի վրա այցելեց Ցունիսի ծովափնայ նահանգները, Սֆակսի շրջակայները հանգիստ են։ Տեղական ազգաբնակութիւնը ընտելանում է նոր կարգերին և հասցնում է ֆրանսիացիներին իր այգիների արդիւնքները, որոնց մեծ աշխատանքով ծախում է ֆրանսիացիների վրա։

„ՄՇԱԿԻ“ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

—Աբաւլեթեան. Զ. Վ. Եթէ կամենում էք որ ձեր նամակները տպվեն, կամ նրանից քաղուածք անենք,—աշխատեցէք մաքուր գրել։ Եթէ ոչ, ձեր նամակները անտիպ կը մնան, որովհետև ամենևին չեն կարդացվում։

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՇՐՈՒՆԻ